

ալ բաւական տարբեր էին անով որ այս տեղերը կանուխէն ոտնակոխ եղան Սելջուկեանց: Բայց նաեւ Բաբերդ ու Սպեր աւելի երկար վայելեցին քրիստոնեայ վարչութիւն մը քան Հայաստանի շատ ուրիշ մասերը: Պրոկոպիոս Յուստինիանու շինութեանց (յաճախ աւելի վերանորոգութեանց) մէջ կը յիշէ նաեւ Բաբերդ, տակաւին հին ձեւով Բայքէրդ, Βαυβερδών գրելով (de Aedificiis, III, 4). մինչդեռ Գէորգ Կեղրենոս¹ թէեւ ձեւը կը պահէ, արդէն արդի արեւմտահայ արտասանութեամբ կը գրէ Παρπερτε¹, երբ կը պատմէ Վարդ Բոյլի (Bardas Boïlas) գրդած այն ապստամբութիւնը որուն ձեռնարկեցին երկու աւագներ, Աղբիւնոս Խաղտեցի (Χαλδαῖος) եւ Տաճատ Հայ (Τατζάτης ὁ Ἀρμένιος), որոնք տիրեցին բերդին. բայց այն ժամանակի նշանաւոր հայ զօրավար Յովհաննէս, բիւզանդացիներէն «Կուրկուաս», յորջորջուած (ὁ Κουρκόυας) շուտով ընկճեց ապստամբութիւնը (924ին): Տուրիլի արշաւանքէն պատահաբար ազատեցաւ Բաբերդ: Սելջուկեան այս առաջին գրոհները հասած էին «մինչեւ

¹ Georg Cedrenus, ed. Bekker. Bonnae, 1839, Vol. II, p. 302.